ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«Հետք» օրաթերթի լրագրող
Սյուզաննա Օհանյանին

28. 11. 2025թ.

Հարգելի՛ տիկին Օհանյան,

Շնորհակալություն եմ հայտնում ուղարկած հարցման համար: Լրագրողական վերահսկողությունը և հանրային որոշումների նկատմամբ բարձր պահանջատիրությունը ժողովրդավարական պետության անբաժանելի բաղադրիչներն են:

Այս գործընթացում ես առաջնորդվում եմ պետական պատասխանատվության, հանրային շահի առաջնայնության, ինչպես նաև թափանցիկության սկզբունքներով, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածով և «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով պատգամավորին արգելվում է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Ուստի, 2021 թվականին պատգամավոր ընտրվելու պահից ի վեր «Նարեկ» ՍՊԸ-ում ունեցած իմ բաժնեմասը ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման՝ օրենքի պահանջի և անաչառության սկզբունքի համապատասխան:

Պատգամավորը չունի լիազորություն մեկնաբանելու կամ ներկայացնելու տվյալ ընկերության կողմից տասնամյակներ առաջ իրականացված պայմանագրային կամ կառուցապատման գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն: Ես ոչ մի իրավական, միջամտողական կամ քաղաքական ազդեցություն չեմ գործադրել և չեմ կարող գործադրել ընկերության գործունեության վրա:

Հարցերը, որոնք վերաբերում են ընկերության տնտեսական գործունեությանը և համայնքային մարմինների կայացրած ակտերի կատարմանը, իրավասու է մեկնաբանելու բացառապես «Նարեկ» ՍՊԸ-ի տնօրենությունը՝ որպես տնտեսական գործունեության իրական և իրավական պատասխանատու սուբյեկտ:

Վստահ եմ, որ պետական պաշտոնյայի անաչառությունը կարևոր է հանրային շահի պաշտպանության համար, և մշտապես պատրաստ եմ օրենքի շրջանակներում համագործակցելու լրագրողական համայնքի հետ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ